

ները կատարում են միասնական մեթոդիկայի համաձայն:

Բերում ենք կաշվի մեջ պարունակվող քրոմի օքսիդի տվյալները, դաբաղման տվյալ մեթոդը արմատավորելուց առաջ և հետո (աղյուսակ 2):

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Михайлов А. Н. Химия дубильных веществ и процессов дубления, М., 1953.

Աղյուսակ 2

Աշխատանքի տեսակը	Քրոմի օքսիդի միջին պարունակությունը 1956 թ. ապրիլի մեջ %-ով	Քրոմի և օքսիդի միջին պարունակությունը 1957 թ. ապրիլի մեջ %-ով
Մեկ տարեկան հորթի կաշի և կիսակաշի	3,63	4,2
Խոզի կաշի	3,59	4,02
Կաթնակեր հորթի կաշի	3,7	4,1

Նոր արտադրանք և նյութեր

ՀԱՅԷԼԵԿՏՐԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՆՈՐ ՍԵՐԻԱ

Հայէլեկտրագործարանը մշակել է մեխանիկական համուղղիչով և լարման ավտոմատիկ կարգավորումով սինխրոն գեներատորների նոր սերիա:

Մեխանիկական համուղղիչի միջոցով գրգռում ստացող գեներատորների սերիայի նախագծման անհրաժեշտությունը թելադրվում էր հետևյալ պատճառներով:


Գրգռիչի առկայությունը ժամանակակից սինխրոն գեներատորը փոխարկում է երկմեքենա ագրեգատի, որը կոնստրուկտիվորեն և տեխնոլոգիապես բարդ է խոշոր սերիայի արտադրության մեջ: Փոքր և միջին կարողությունների համար գրգռիչի կշիռն ու արժեքը չափակցելի են հենց իրեն՝ ագրեգատի հետ, որը տնտեսապես ձեռնառու չէ: Գրգռիչը, հանդիսանալով հաստատուն հոսանքի գեներատոր, շահագործման ժամանակ դառնում է բոլոր վթարների և թերությունների հիմնական պատճառը (մինչև 75%):

Մեխանիկական համուղղիչով և լարման ավտոմատիկ կարգավորումով ԵՍ սինխրոն գեներատորների նոր սերիան ազատ է վերևում նշված թերություններից:

ԵՍ սերիայի գեներատորը ծառայում է որպես 50 հերց հաճախականությամբ փոփոխական հոսանքի էլեկտրաէներգիայի աղբյուր համա-

արդյունաբերական նշանակություն ունեցող ստացիոնար և փոխադրովի տեղակայումներում:

Գեներատորների աշխատանքի նոմինալ ռեժիմը երկարատև է: Գեներատորները նախատես-



Նկ. 1. ԵՍ սերիայի գեներատոր:

ված են 0,8 (եռ մնացող) կարողության գործակցի դեպքում աշխատելու համար:

Գեներատորների կայունացնող հարմարանքը

տալահոլում է լարման ավտոմատիկ պահպանումը միջին կարգավորվող արժեքի $\pm 5\%$ -ի սահմաններում՝ նոմինալ տեղակայման, պտտման նոմինալ արագության, պարապ ընթացքից մինչև նոմինալ մեծությունը բեռնավորման փոփոխություն (հտ ընկնող) մինչև մեկ կարո-
թյան և 0,8-ից (հտ ընկնող) մինչև մեկ կարո-
թյան գործակցի յուրաքանչյուր արժեքի դեպ-
քում:

Կայունացող հարմարանքը ապահովում է նաև լարման փոփոխության հնարավորությունը նո-
մինալի 95—100%-ի սահմաններում, բեռնավոր-
ման յուրաքանչյուր արժեքի դեպքում՝ պարապ
ընթացքից մինչև նոմինալ մեծությունը, 0,8-ից
(հտ ընկնող) մինչև մեկ կարողություն գործակ-
ցի դեպքում և շրջապատող միջավայրի $+35^{\circ}\text{C}$ -ից
մինչև 0°C ջերմաստիճանում:

Տվյալ կոնստրուկցիան խիստ պարզացրած է

զրգուիչ ունեցող գեներատորների համեմատու-
թյամբ, որովհետև նրա մեջ նախատեսված է մե-
խանիկական համուղղիչ, որը տեղադրվել է կոն-
տակտային օղակների փոխարեն: Գեներատորը
թողարկվում է հորիզոնական պաշտպանված կա-
տարումով, թաթերի վրա, երկու առանցքակալա-
յին վահաններով: Գեներատորի վենտիլացիան
առանցքային է, արտաձգիչ:

Ներկայումս Հայէլեկտրագործարանը յուրաց-
նում է մեխանիկական համուղղիչով 5—100 կվտ
սինխրոն գեներատորների սերիան, նա արդեն
ձեռնամուկ է եղել ԵՍ—92—6Մ, ԵՍ—91—4Մ,
ԵՍ—83—6Մ, ԵՍ—82—4Մ տիպի գեներատորնե-
րի սերիական թողարկմանը:


(Ինֆորմացիոն-տեխնիկական բյուրոնե,
ՅՆԻՒՍ, № 3, 1958, Երևան)

ԵՐԵՎԱՆԻՏ՝ ՆՈՐ ՀՈՒՄՔ ԱՊԱԿՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մ. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԵՎ Կ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Ժողտնտխորհի արդյունաբերական բիմայի ինստիտուտ

Երևանի տը այն պրոդուկտներից մեկն է, որը
ստացվում է նեֆելինային սիենիտները վերա-
մշակելիս նատրիումի մետասիլիկատի լուծույթի
վրա ածխաթթվական դազի (CO_2) ներգործելու
միջոցով: Հետևյալ



ռեակցիայի հետևանքով ամորֆ սիլիկատի
նստվածք է տալիս սողայի լուծույթում: Ֆիլտ-
րատի շորացումից հետո ստացվում է ամորֆ սի-
լիկատ, որը խառնված է սողայի հետ տարբեր
հարաբերությամբ, նայած սկզբնական պրոդուկ-
տի կոնցենտրացիային և ֆիլտրատի լվացման
ապտիճանին:

Ստացվող պրոդուկտը, որն իրենից ներկա-
յացնում է ամորֆ սիլիկատի և սողայի նուրբ
դիսպերսիային խառնուրդ, կոչվել է երևանիտ:
Պատրաստ վիճակում երևանիտը սպիտակ փոշի
է, որի մեջ, սպառողի ցանկությամբ, $\text{SiO}_2 \cdot \text{Na}_2\text{CO}_3$
հարաբերակցությունները կարող են տարբեր
լինել:

Ենթադրվում է թողարկել երեք տեսակի երե-
վանիտ. երևանիտ-10, երևանիտ-25 և երևանիտ-
40, համապատասխանորեն սողայի՝ 10, 25 և 40%
պարունակությամբ:

Դիտելով երևանիտը տրպես հումք ապակի
եփելու համար, անհրաժեշտ է նշել նրա հետե-
յալ առանձնահատկությունները:

1. Պրոդուկտի մաքրությունը: Երևանիտի
մաքրությունը, ինչպես այդ հետևում է նրա ըս-
տացման տեխնոլոգիայից, կախված է նատրիու-
մի մետասիլիկատի մաքրությունից: Ախտայի
լեռնաքիմիական կոմբինատի նախագծում նա-
խատեսվում է մետասիլիկատի բավական լավ
մաքրումը՝ նրա բազմապատիկ վերաբյուրեղաց-
ման միջոցով, որ հնարավորություն կտա ստա-
նալ բացառիկ մաքրության երևանիտ: Երկաթի
օքսիդի (Fe_2O_3) պարունակությամբ երևանիտը
գերազանցում է մինչև այժմ ապակեեփման հա-
մար գործածվող հայտնի ավազներից:

2. Ամորֆ սիլիկատի և սողայի բարձր